

ԱԳՆԵՍԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի միջազգային և
եվրոպական իրավունքի ամբիոնի հայցող

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՍԱՍԼՈՒՔՅԱՆ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՆԴՈՒԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿՆՔԱԾ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ

Ինչպես հին աշխարհում, միջնադարում
նույնպես պետությունների կողմից միջազգային
իրավական հարաբերությունների մեջ մտնելու
հանգամանքը պայմանավորված էր քաղաքական,
ռազմական և տնտեսական գործոններով: Քանի որ
միջնադարյան պետությունների արտաքին քաղա-
քականության առաջնային խնդիրներից էր զավթո-
ղական պատերազմների մղումը նոր տարածքներ և
ռեսուրսներ ձեռք բերելու համար, ռազմաքաղաքա-
կան նպատակով դաշնակիցների որոնումը, ուստի,
պետությունների միջև հարաբերություններն առա-
վել հաճախ ծավալվում էին պատերազմների շուրջ,
որոնց վարման կամ դադարեցման համար կնքվում
էին միջպետական պայմանագրեր: Առաջնորդվե-
լով սեփական շահերի ապահովման և ուժի իրա-
վունքի դիրքերից՝ պետությունները միջազգային
պայմանագրեր կնքելիս, որպես կանոն, անտեսում
էին պարտավորությունների փոխադարձության
հարցը: Փոխադարձության հիմքի վրա էին կառուց-
վում հիմնականում պետությունների առևտրային
հարաբերությունները: Այդ հարաբերությունների
զարգացման առանձնահատկությունը ենթադրում
էր համագործակցության հաստատում, ինչը հնա-
րավոր էր իրականացնել շահերի և պարտավորու-
թյունների փոխադարձության և իրավահավասար-
ության ապահովման հիման վրա:

Կիլիկիայի հայկական պետության՝ մեզ հայտ-
նի միջազգային պայմանագրերի ուսումնասիրու-
թյունը ցույց է տալիս, որ այդ պայմանագրերում
նույնպես կողմերի իրավունքների և պարտավորու-
թյունների փոխադարձությունը ոչ միշտ է պահ-
պանվել: Կիլիկյան պետության միջազգային պայ-
մանագրերի կնքման պրակտիկայում զգալի են
անփոխադարձ հավասար քաղաքական պայմանագրե-
րը: Անփոխադարձ հավասար էին սովորաբար Կիլիկի-
այի հաշտության պայմանագրերը, ինչպիսիք են
օրինակ՝ Անտիոքի իշխանապետության, Իկոնիա-
յի սելջուկյան սուլթանության, Եգիպտոսի մամլուք-
յան սուլթանության հետ կնքված պայմանագրերը:

Այսպես, 1208թ., 1216թ., 1220թ. (1221) Կիլիկիայի
հայկական թագավորության և Իկոնիայի սելջուկ-
յան սուլթանության միջև կնքված հաշտության
պայմանագրերը երաշխավորում էին ռազմական
գործողությունների արդյունքում հաղթանակ տա-
րած սուլթանի շահերը՝ ներառելով Կիլիկիայի կող-
մից տարածքային զիջումներ, ամենամյա տուրքի
վճարում, զինվորական օժանդակ ուժերի տրամադ-
րում և այլն:

XIII-րդ դարի 50-60-ական թթ. Մերձավոր
Արևելքում ուժերի հարաբերակցության փոփոխու-
թյան հետևանքով Կիլիկիայի հայկական թագավո-
րության գլխավոր ախոյանն է դառնում Եգիպտոսի
մամլուքյան սուլթանությունը: Եգիպտոսի սուլթա-
նության կողմից Կիլիկիայի դեմ կատարված ար-
շավանքների արդյունքում կնքված հայ-եգիպտա-
կան հաշտության պայմանագրերը սովորաբար
ամրագրում էին Եգիպտոսի քաղաքական և տնտե-
սական շահերը²: Այսպես օրինակ՝ հայ-եգիպտա-
կան առաջին պայմանագիրը (1268թ.) Հեթում I-ը
կնքեց Կիլիկիայի դեմ եգիպտական արշավանքի
ժամանակ գերևարված իր որդի Լևոնին ազատելու
նպատակով՝ տեղի տալով սուլթան Բեյբարսի պա-
հանջներին³: 1323թ. հաշտության պայմանագիրը,
որը կնքվել էր 15 տարի ժամկետով, հայկական
կողմին պարտավորեցնում էր տարեկան մեկ միլի-
ոն երկու հարյուր հազար արծաթ դիրհեմ վճարել
Եգիպտոսի սուլթանին, ինչպես նաև սուլթանին
տրամադրել Այասի նավահանգստի եկամտի և
օտարերկրացիներին վաճառվող աղի եկամտի կե-
սը: Սուլթանը պարտավորվում էր միայն իր գորքե-
րը ետ քաշել Կիլիկիայից՝ արտոնելով վերաշինել
ավերված բոլոր քաղաքները, բացի Այաս ծովային
բերդից⁴: 1337թ. հայ-եգիպտական հաշտության
պայմանագրով Դաշտային Կիլիկիայի մի մասը,
այդ թվում՝ Այաս քաղաքը, որի նավահանգիստը
մեծ եկամուտներ էր բերում երկրին, անցնում էին
Եգիպտոսին: Կիլիկիան պարտավորվում էր նաև
խզել իր հարաբերությունները Արևմուտքի երկրնե-

րի և Հռոմի պապի հետ⁵:

Հայ-եզիպտական պայմանագրերից պետք է առանձնացնել 1285թ. Եզիպտոսի սուլթան Զալաունի և Կիլիկիայի թագավոր Լևոն III-ի միջև կնքված հաշտության պայմանագիրը, որի մի շարք հոդվածներում իրավահավասար հիմունքով էին երաշխավորվում կողմերի հպատակների անձնական և սեփականության իրավունքները: Միջնադարյան Եվրոպայում և Ասիայում անտեսված էին օտարերկրացիների իրավունքները, ինչը լրջորեն խոչընդոտում էր այլ երկրներում վաճառականների գործունեությունը: Եզիպտոսի առևտրատնտեսական շահերից էր բխում պայմանագրում փոխադարձության ապահովումը հատկապես այն պարտավորությունների հարցում, որոնք վերաբերում էին վաճառականների գործունեության համար նպաստավոր պայմանների ստեղծմանը: Մասնավորապես, իրավահավասար հիմունքով էին երաշխավորվում կողմերի հպատակների ազատ ժամանման և տեղաշարժի իրավունքը, նրանց անձի և սեփականության անձեռնմխելիությունը, ժառանգության իրավունքը և այլն:

Չնայած պայմանագրի մի շարք կետերում կողմերի համար սահմանվել էին միատեսակ իրավունքներ և պարտավորություններ, այդուհանդերձ պայմանագիրը չենք կարող համարել իրավահավասար: Պայմանագրում ամրագրված այլ դրույթներ փաստում են, որ պայմանագրում ուժեղ կողմը Եզիպտոսն էր: Նախ՝ Կիլիկիան պարտավորվում էր մինչև պայմանագրի ժամկետի պվարտը Եզիպտոսին ամենամյա հարկ վճարել, ինչպես նաև հրաժարվել բերդերի և ամրոցների կառուցումից: Բացի այդ, Կիլիկիան պարտավորություններ էր ստանձնում ոչ միայն Եզիպտոսի սուլթանի հպատակների, այլ մահմեդականություն դավանող բոլոր օտարերկրացիների նկատմամբ, ինչը հատուկ շեշտվում էր պայմանագրի առանձին կետերում: Այսպես. «Եթե մահմեդական վաճառականը Լևոն թագավորի տերության մեջ մահանա, ապա նրա ունեցվածքը պետք է խնամքով պահվի և հանձնվի մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրի ներկայացուցիչներին, որպեսզի այն տնօրինվի համաձայն Սուրբ Օրենքի», «Եթե մահմեդական բանտարկյալներից ոմանք մահացած լինեն Լևոն թագավորի բանտերում, Լևոն թագավորը պարտավորվում է սուլթանին հանձնել այդ վաճառականների ունեցվածքը, տղամարդ և կին ստրուկներին, նրանց ապրանքները՝ առանց պահելու դրանցից ամենավոքը մասն անգամ», «Լևոն թագավորը խոստանում է ազատ արձակել իր բանտերի մեջ գտնվող մահմեդական վաճառականներին, ինչ ցեղի և ինչ ազգի էլ պատկանեն, և նրանց վերադարձնել իրենց ունեցվածքը, ապրանքները, տղամարդ և կին ստրուկներին, ձիերը, ջորիները: Ազատ արձա-

կել ամեն կարգի, ցեղի և ազգության պատկանող բոլոր մահմեդականներին, որոնք ազատագրված ապրում են իր ամրոցներում և տերության մեջ, և նրանց ուղարկել դեպի Բարձր Դուռ՝ առանց որևէ մեկին ետ պահելու»: Կիլիկյան թագավորության բանտերից մահմեդական վաճառականներին՝ անկախ նրանց ազգային պատկանելությունից ազատելու կապակցությամբ Լևոն III-ը արտահայտել էր իր անհամաձայնությունը՝ պատճառաբանելով, որ իր հպատակներից շատերն են գտնվում Կարամանի իշխանի և Ռումի սուլթանության բանտերում, և, եթե նա ազատ է արձակելու վերջիններիս բանտարկյալներին, ապա նրանք էլ պարտավոր են ազատ արձակել իր հպատակներին: Այս առթիվ սուլթանը պատասխանել է, որ իր պարտքն է համարում պաշտպանել բոլոր մահմեդականների շահերը և իր հովանու տակ վերցնել նրանց: Սուլթանի այդ քաղաքականությունն անմիջականորեն արտահայտվել էր հայ-եզիպտական պայմանագրում: Դա է փաստում նաև պայմանագրի հետևյալ հոդվածը. «Եթե որևէ ազգի, ցեղի կամ կրոնի պատկանող մարդ, ով էլ որ նա լինի, էմիր կամ ստորադաս, ազատ կամ ստրուկ մեր տիրոջ՝ սուլթանի տերությունից փախչի և գնա Հայոց երկիր ապաստանելու, ապա Լևոն թագավորը և նրա ներկայացուցիչները պարտավոր են փախստականին ձերբակալել և լավ հսկողության տակ ուղարկել սուլթանի արքունիք նրա հետ գտնվող բոլոր անձանց և այն ամենի հետ միասին, ինչ կգտնվի նրա մոտ՝ դրանք լինեն ուղեկիցներ, ստրուկներ, ձիեր, ջորիներ, գործվածքներ, արծաթ և այլն: Եթե փախստականն իր կրոնը փոխած և քրիստոնեություն ընդունած լինի, ապա Լևոն թագավորը պարտավոր է նրան հանձնել մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրին՝ առանց այս պայմանի գործադրման դեմ որևէ պատճառաբանություն բերելու: Եթե Լևոն թագավորի հպատակներից, ճորտերից կամ զինվորներից որևէ մեկը փախչի և իր կրոնին հավատարիմ մնա, ապա սուլթանի ներկայացուցիչները պարտավոր են նրան հանձնել, բայց եթե մահմեդականություն ընդունած լինի, միայն նրա մոտ գտնվող ունեցվածքը կվերադարձվի»:

Ըստ պայմանագրի՝ Լևոն III-ը պարտավորվում էր նաև հարաբերությունները խզել սուլթանի թշնամիների՝ ենթադրաբար Հռոմի պապի և Մոնղոլական իլխանության հետ, ինչն ուղղակիորեն հակադրվում էր Կիլիկիայի արտաքին քաղաքական գծին. «Մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրի տերության, նրա զորքի և հպատակների մասին չպետք է որևէ բան հայտնեմ իբրև օժանդակություն այն անձանց, ովքեր մտադիր են վնաս պատճառել՝ թե՛ արշավանքով, թե՛ այլ եղանակով, չմասնակցել որևէ դավադրության, որը կարող է վնասաբեր և վատ հետևանքներ ունենալ, բարյացակամություն ցույց չտալ մեր տեր սուլթանի թշնամիներից որևէ

մեկին, չօգնել, չաջակցել նրան, որևէ հաղորդակցություն չունենալ նրա հետ՝ ո՛չ անուղղակի նշաններով, ո՛չ նամակով, ո՛չ դեպքային կամ բանավոր դիմումով, այլ պետք է ձգտեմ իմ բանակցություններով պաշտպանել իմ անձն ու երկիրը: Պետք է ամեն ջանք գործադրեմ մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրի տերությունը բոլոր աղետներից պաշտպանելու համար, ձեռքալալելու բոլոր նրանց, ովքեր իմ երկրից մեկնելով, մտադիր են այնտեղ թշնամություն անել և վնաս հասցնել»:

Անիրավահավասարության խնդիրը առկա է նաև Կիլիկյան պետության դաշնակցային պայմանագրերում, որոնցից, հատկապես, կարելի է մատնանշել 1243թ. (1244) և 1254թ. կնքված հայմոնոլական միջպետական պայմանագրերը: Հետաքրքրական է, որ Կիլիկիայի թագավոր Հեթում I-ի և մոնղոլ զորավար Բաչու Նոյիմի միջև 1243թ. (1244) կնքված մեզ հայտնի հայմոնոլական առաջին պայմանագրի կնքման փաստի հետ կապված հայ պատմիչները նշում են, որ Կիլիկիան դաշինք կնքեց մոնղոլների հետ՝ հայտնելով իր հնազանդությունը, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ պայմանագիրն իր բնույթով անիրավահավասար էր: Այսպես՝ XIII դարի հայ պատմագիրներից Կիրակոս Գանձակեցին իր «Պատմություն հայոց» աշխատության մեջ գրում է, որ Հեթումը պատվիրակություն ուղարկեց մոնղոլների մոտ խաղաղության դաշինք կնքելու և նրանց իր հնազանդությունը հայտնելու: Մոնղոլները բարեկամություն հաստատեցին արքայի հետ և տվեցին համապատասխան գրություն՝ էլ-տամդա (խանական կնիքով հաստատված փաստաթուղթ)¹³: Նույն դարաշրջանի պատմիչ Գրիգոր Ակներցու հաղորդման համաձայն՝ Հեթումը գերադասեց իր հնազանդությունը հայտնել մոնղոլներին, նրանց հարկ վճարել և բարեկամության դաշինք հաստատել¹⁴: Կողմերի անիրավահավասարության մասին է վկայում նաև այն, որ որպես պայմանագրի կնքման նախապայման մոնղոլները պահանջել էին իրենց հանձնել Կիլիկիայում ապաստանած Իկոնիայի սուլթանի ընտանիքի անդամներին:

Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում 1254թ. Հեթում I-ի և Մանգու խանի միջև մոնղոլների թագավորանիստ Ղարաղորումում կնքված պայմանագիրը, որի բովանդակությունը բերված է Հեթում I-ի համանուն եղբորորդու՝ Հեթում պատմիչի՝ «Արևելքի երկրների պատմության ծաղկաբաղ» խորագրով աշխատության մեջ: Պայմանագիրը ներկայացված է Հեթում I-ի յոթ առաջարկների և Մանգու խանի յոթ պատասխանների ձևով:

«Նախ՝ (Հեթումը) խնդրեց, որ կայսրը և նրա ողջ ժողովուրդը դառնան քրիստոնյա և մկրտվեն:

Երկրորդ՝ որ հավիտենական խաղաղություն և բարեկամություն հաստատվի թաթարների

և քրիստոնյաների միջև:

Երրորդ՝ որ թաթարների կողմից նվաճված և նրանց ենթակա բոլոր երկրներում քրիստոնեական եկեղեցիները և հոգևոր կոչում ունեցող բոլոր անձիք ազատ լինեն և ազատվեն ամեն տեսակ հարկերից:

Չորրորդ՝ որպեսզի Մանգու խանը օգնի Սուրբ Երկիրը սարակիմոսների (մահմեդականների) ձեռքից ազատագրելու և այն քրիստոնյաներին վերադարձնելու գործին:

Հինգերորդ՝ որ նա կարգադրի Ռումի սուլթանությունում գտնվող թաթարներին ոչնչացնել Բաղդադ քաղաքը և խալիֆին՝ Մուհամմեդի կեղծ հավատի գլխավորին ու վեհապետին:

Վեցերորդ՝ որպեսզի իրեն արտոնություն տա և կարգադրի Հայոց թագավորությանը մոտ գտնվող թաթարներին իրեն օգնություն ցուցաբերել, երբ նրանց այդ մասին խնդրի:

Յոթերորդ՝ որ Հայոց թագավորությունից սարակիմոսների զավթած և թաթարների ձեռքն անցած կամ նրանց վաճառված բոլոր տարածքները իրեն վերադարձվեն ազատ և խաղաղ կերպով: Եվ բացի այդ, այն բոլոր հողերը, որոնք հայոց թագավորը կկարողանա նվաճել սարակիմոսներից, կարող է տիրապետել խաղաղ և հանգիստ կերպով՝ առանց թաթարների կողմից առարկությունների հանդիպելու»:

«Ձեզ՝ հայոց թագավոր, մենք՝ որպես կայսր, ասում ենք, որ նախ մկրտվելու ենք և քրիստոնեական հավատն ենք ընդունելու և մկրտելու ենք բոլոր նրանց, ովքեր մեր իշխանության տակ են, որպեսզի նրանք քրիստոնյա դառնան: Սակայն, կարծում ենք, որ դա պետք է լինի կամավոր կերպով, քանզի հավատը հարկադրանք չի հանդուրժում:

Երկրորդ խնդրանքին մենք պատասխանում ենք, որ համաձայն ենք, որպեսզի խաղաղություն և հավիտենական բարեկամություն լինի քրիստոնյաների և թաթարների միջև, և, եթե քրիստոնյաները խաղաղություն ու հավատարիմ բարեկամություն պահպանեն, մենք էլ նրանց նկատմամբ այդպես կվարվենք:

Յանկանում ենք նաև, որ քրիստոնեական բոլոր եկեղեցիներն ու հոգևորականությունը ազատ լինեն և ազատվեն ամեն տեսակ հարկերից և չենթարկվեն ճնշումների:

Սուրբ Երկրի վերաբերյալ մենք ասում ենք, որ, եթե կարողանանք, անձամբ կգնանք՝ Հիսուս Քրիստոսի նկատմամբ տաժաժ մեր հարգանքից ելնելով, բայց քանի որ մենք այս կողմերում շատ գործեր ունենք, մեր եղբայր Հուլավուին կհանձնարարենք, որպեսզի նա ազատագրի Սուրբ Երկիրը ու վերադարձնի այն քրիստոնյաներին: Բաթուին և մյուս թաթարներին, ովքեր գտնվում են Ռումի սուլթանությունում և այլ երկրներում, կկարգադրենք

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

օգնել մեր եղբայր Հուլավուին գրավելու Բաղդադ քաղաքը և ոչնչացնելու խալիֆին՝ մեր ոխերին թշնամուն:

Թաքարներից օգնություն ստանալու Հայոց թագավորի խնդրած արտոնությունների հետ կապված մենք ցանկանում ենք, որպեսզի նա արտահայտեր այդ մասին իր բոլոր ցանկությունները և որը մենք հաստատում ենք:

Այն տարածքները, որոնք հայոց թագավորը խնդրում է վերադարձնել իրեն, մենք հաստատում ենք և մեր եղբայր Հուլավուին կկարգադրենք նրան վերադարձնել այն բոլոր տարածքները, որոնք նրան են պատկանելիս եղել: Եվ նրան կտանք այն հողերը, որոնք նա կկարողանա նվաճել սարակի-նոսներից, և հատուկ ողորմածությամբ մենք կտանք այն ամրոցները, որոնք մինչ այդ պատկանելիս են եղել նրան»:

Պայմանագրի բնօրինակի բացակայության պայմաններում Հեթում պատմիչի կողմից ներկայացված պայմանագիրը մասնագետների շրջանում տարակարծությունների տեղիք է տվել: Դա պայմանավորված է նախ և առաջ այն հանգամանքով, որ Հեթում պատմիչը, նեկայացնելով հայ-մոնղոլական բանակցությունները, չի հանդիսացել տվյալ ժամանակահատվածի քաղաքական իրադարձությունների ակնատեսը, այլ այդ մասին, իր հավաստմամբ, տեղեկացել է իր հորեղբորից: Նա իր երկը գրել է Կոնստանտին V պապի հանձնարարականով՝ աշխատության վերջում արժարժելով նաև նոր խաչակրաց արշավանք կազմակերպելու հարցը: Պրոֆեսոր Գ. Միքայելյանը Կիլիկիայի հայկական պետության պատմությանը նվիրված իր աշխատության մեջ գալիս է այն եզրահանգման, որ Հեթում պատմիչն իր երկում, անդրադառնալով հայ-մոնղոլական պայմանագրին, արտահայտել է Կիլիկիայի այն ֆեոդալական խմբի քաղաքական դիրքորոշումը, որը շահագրգռված էր Հռոմի պապի և եվրոպական պետությունների հետ քաղաքական և կրոնական կապերի ամրապնդմամբ: Միքայելյանի կարծիքով պատմիչը ցանկացել է ցույց տալ Արևմուտքին, որ դեռ Հեթումյանների դինաստիայի հիմնադիրը ջանքեր է գործադրել Արևելքում քրիստոնյաների հաղթանակի համար և այդ նպատակով ուղևորություն կատարել դեպի Ղարադղում, մեծ խանին համոզել քրիստոնյաներին ընդունել և պատերազմ սկսել քրիստոնյաների գլխավոր թշնամիների՝ Բաղդադի և Եգիպտոսի մահմեդականների դեմ: Թերևս Հեթումյանները ձգտել են նպաստել մոնղոլների շրջանում քրիստոնեության տարածմանը, նամանավանդ, եթե հաշվի առնենք, որ XIII դարի 40-60 ական թթ. Հռոմի պապը և եվրոպական տերությունները փորձում էին հեթանոս մոնղոլներին դարձնել քրիստոնյա: Սակայն, Հեթում պատմիչի պնդմամբ Մանգու խանի՝ քրիստոնեություն ընդունելու հանգամանքը ոչ մի աղբյու-

րով այլևս չի հաստատվում:

Պայմանագրում կողմերի իրավունքները և պարտավորությունները ներկայանում են միակողմանիորեն: Այնտեղ նշվում է անհրաժեշտության դեպքում մոնղոլներից օգնություն խնդրելու Կիլիկիայի իրավունքի մասին, սակայն բացակայում են մոնղոլների նկատմամբ Կիլիկիայի պարտավորություններին՝ մասնավորապես դեպի արևմուտք մոնղոլական արշավանքների ժամանակ օժանդակ գործեր տրամադրելուն վերաբերող կետերը: Այնինչ, պատմական փաստերը ցույց են տալիս, որ պայմանագիրն, ըստ ամենայնի, պետք է շոշափեր կողմերի միջև ռազմական փոխօգնության հարցը: Հայ-մոնղոլական պայմանագիրը կնքվել է այն ժամանակ, երբ մոնղոլներն ակտիվորեն պատրաստվում էին Առաջավոր Ասիայի դեմ նոր արշավանքի, որը ղեկավարելու էր Մանգու խանի եղբայր Հուլավուն: Կիլիկիայի աշխարհագրական դիրքը բավականին բարենպաստ էր մոնղոլական մերձավորարևելյան ռազմական ծրագրերի մեջ Կիլիկիայի հայկական պետությունը ներգրավելու համար: Պատմական աղբյուրները տեղեկություններ չեն հաղորդում 1258թ. մոնղոլների կողմից Բաղդադի խալիֆայության գրավմանը կիլիկյան գործերի մասնակցության մասին: Սակայն, հայտնի է իլ-խանների սիրիական արշավանքներին Կիլիկիայի ակտիվ մասնակցությունը, մասնավորապես Հուլավու խանի՝ 1259թ., Աբաղա խանի՝ 1281թ., Ղազան խանի՝ 1299-1303թթ. արշավանքներին: Մոնղոլական ռազմական գործողություններին չմասնակցելու դեպքում Կիլիկիան հաճախ սպառազինություններով օգնել և այլ տեսակի աջակցություն է ցուցաբերել իր դաշնակցին: Ինչ վերաբերում է Կիլիկիայի հայկական թագավորությանը տարածքներ վերադարձնելու և անհրաժեշտության դեպքում օգնություն ցույց տալու մոնղոլական կողմի պարտավորությանը, սպա այն համապատասխանում է պատմական փաստերին: 1266թ., 1292թ. հայկական թագավորության դեմ եգիպտական մամլուքների արշավանքների ժամանակ մոնղոլական օժանդակ գորաջոկատներ են ուղարկվել Կիլիկիա: Ղազան խանը 1303թ. իր վերջին սիրիական արշավանքի ձախողումից հետո Հեթում II-ին տրամադրել է 1000 ձիավոր և դրամական օժանդակություն՝ Եգիպտոսի հարձակումներից Կիլիկիայի սահմանները պաշտպանելու համար: 1263-1264թթ. Հեթում I-ի՝ Սիրիայի դեմ ռազմական գործողություններին մասնակցել են նաև մոնղոլական զորախմբեր: 1259թ. Հուլավու խանի սիրիական արշավանքի արդյունքում Կիլիկիային են վերադարձվել Մարաշ քաղաքը և Բեհեսնին, իսկ Ղազան խանի՝ 1299թ. արշավանքի արդյունքում մինչ այդ Եգիպտոսի կողմից գրավված սահմանային ամրոցներ ու բերդեր: Այդուհանդերձ, պատմական փաստերը ցույց են տալիս, որ հայ-մոնղոլական դաշնակցային հա-

www.lawinstitute.am

րաբերությունները անհրավահավասար հիմքերի վրա էին: Հայկական թագավորությունը որոշակի հարկ էր վճարում Արևմտյան իլխանությանը, կիլիկյան զորքերը որոշիչ դեր էին խաղում մոնղոլական արշավանքների ընթացքում, մինչդեռ Կիլիկի-

այի դեմ Եգիպտոսի սուլթանության արշավանքների ժամանակ մոնղոլական կողմը փոքրաքանակ ռազմական ջոկատներ էր տրամադրում, որոնք հաճախ ուշացումով էին ժամանում:

¹ Տե՛ս Կիլիկիայի հայկական պետության կողմից կնքված քաղաքական պայմանագրերի բնօրինակների կամ պատճենների բացակայության պայմաններում այդ պայմանագրերի ուսումնասիրության համար հիմնական աղբյուր են հանդիսանում միջնադարյան հայ և օտարազգի մատենագիրների երկերում տեղ գտած հաղորդումները: Կիլիկիայի քաղաքական պայմանագրերից մեզ է հասել միայն 1285թ. հայ-եգիպտական հաշտության պայմանագրի տեքստը, որի պատճեն բերված է XVդ. արաբ պատմագիր Թադի-էդ-Դին Ահմեդ Մաքրիզիի՝ Եգիպտոսի մամլուք սուլթանների պատմությանը նվիրված աշխատության մեջ:

² Տե՛ս Ի նկատի ունենք 1268թ., 1285թ., 1292թ. (1293), 1298թ., 1323թ., 1337թ. կնքված հաշտության պայմանագրերը:

³ Տե՛ս 1268թ. հայ-եգիպտական պայմանագրի մասին XIVդ. արաբ պատմագիր Աբուլ Ֆիդայի «Ժամանակագրության» մեջ նշվում է. «...հաշտություն կայացավ ալ-Մալիք ալ-Չահիրի (սուլթան Բեյբարս) և Սսի տիրոջ՝ Հեթումի միջև այն հիման վրա, որ եթե Սսի տերը թաթարների մոտից բերի Սոնկուր ալ-Աշկարին, որոնք նրան գերի էին վերցրել Հալեբի բերդից այն ժամանակ, երբ Հուլադուն տիրել էր այդ տեղին, և բացի այդ հանձնի Բեհեսնին, Դարպասկը, Մարզանը, Դաբանը, Շիհել Հադիդը, ապա սուլթանն էլ ազատ կարձակի նրա որդի Լևոնին: Ապա Սսի տերը ներկայացավ Աբադային, թաթարներին և նրանից խնդրեց Սոնկուր ալ-Աշկարին: Նա էլ հանձնեց նրան և Սոնկուր ալ-Աշկարը վերադարձավ ալ-Մալիք ալ-Չահիրի ծառայությանը և Դարպասկը, ինչպես և մյուս վայրերը, որոնք հիշեցինք, հանձնվեցին, բացի Բեհեսնիից: Ալ-Մալիք ալ-Չահիրն էլ ազատ արձակեց Սսի տեր Հեթումի որդուն՝ Լևոնին ու վերադարձրեց իր հորը» (Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Յակուտ ալ-Համավի, Աբուլ Ֆիդայ, Իբն Շադադ, կազմեց Հ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 237):

⁴ Տե՛ս Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 291:

⁵ Տե՛ս Ալիշան Ղ., Սիսուան, Վենետիկ, Ս.Ղազար, 1885, էջ 392, Չամչյան Մ., Հայոց Պատմություն, հատոր Գ, Երևան, 1984, էջ 337:

⁶ Տե՛ս Պայմանագիրը կնքվել է 10 տարի, 10 ամիս, 10 օր, 10 ժամ ժամկետով:

⁷ Տե՛ս Langlois V., Le trmsor des chartes d'Armnnie, ou, Cartulaire de la chancellerie royale des Roupzniens, Venise, 1863, p. 226:

⁸ Տե՛ս Langlois V., Le trmsor des chartes d'Armnnie, p. 225:

⁹ Տե՛ս Langlois V., Le trmsor des chartes d'Armnnie, p. 225:

¹⁰ Տե՛ս Բակուրյան, Դաշնագիր խաղաղութեան ընդմեջ Լեւոն Գ թագավորի և Եգիպտոսի մամլուքեան սուլթան Գալաունի, կնքում 1285թ. մայիսի 7-ին, Բանասեր, հ. Գ, թիվ 1, Պարիս, 1902, էջ 79:

¹¹ Տե՛ս Langlois V., Le trmsor des chartes d'Armnnie, p. 227:

¹² Տե՛ս Langlois V., Le trmsor des chartes d'Armnnie, p. 230:

¹³ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ.Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 285:

¹⁴ Տե՛ս Մաղաքիա Աբեղա (Գրիգոր Ակներցի), Պատմութիւն վասն ազգին նետողաց, Ս. Պետերբուրգ, 1870, էջ 16:

¹⁵ Տե՛ս Recueil des historiens des croisades, Documents Armenizns, t. II, Paris, 1967, pp. 164-166, 297-299:

¹⁶ Տե՛ս 1254թ. հայ-մոնղոլական պայմանագրի հետ կապված որոշակի տեղեկություններ են հաղորդում նաև այլ միջնադարյան աղբյուրներ, սակայն տեղեկությունների սակավությունը թույլ չի տալիս լիարժեք պատկերացում կազմել պայմանագրում կողմերի իրավունքների և պարտավորությունների մասին: Կիրակոս Գանձակեցին պայմանագրի հետ կապված միայն հիշատակում է, որ Մանգու խանը Հեթում I-ին հրովարտակ էր տվել, որպեսզի ոչ ոք իրավունք չունենա անհանգստացնել կամ ճնշել նրան և իր երկիրը, ինչպես նաև գրավոր կարգադրություն կատարել բոլոր վայրերի եկեղեցիները (հարկերից) ազատելու մասին (տե՛ս, Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, էջ 367): Մոնղոլական կայսրություն որպես ֆրանսիական թագավոր Լյուդովիկոս IX-ի պատվիրակ ուղևորված Վ. Ռուբրուկը իր ուղեգրության մեջ, Ղարաղորումում տարվող հայ-մոնղոլական բանակցությունների արդյունքների մասին տեղեկանալով թագավորահայր Կոստանդինից, նշում է, որ Մանգու խանը Հեթումին այն առավելություն է շնորհել, որպեսզի ոչ մի դեսպան չմտնի նրա երկիր և նկատելիորեն կրճատել է հարկերը (տե՛ս, Гийом де Рубрук, Путешествие в восточные страны, Путешествие в восточные страны Плато Карпини и Рубрука. М., 1957. С. 192-193):

¹⁷ Տե՛ս Микаелян Г. История Киликийского армянского государства. Ереван. 1952. С. 315.

РЕЗЮМЕ

Вопрос взаимности прав и обязательств в международных договорах, заключенных Киликийским армянским царством с Мамлюкским султанатом Египта и Монгольской империей

В средние века государства при заключении международных договоров исходили из собственных интересов, не учитывая интересы других сторон. На взаимной основе строились в основном торговые отношения государств. В международной договорной практике Киликийского армянского царства неравноправными представляются политические договоры Киликии. В данной статье рассматривается вопрос взаимности прав и обязательств в договорах, заключенных Киликийским армянским царством с Мамлюкским султанатом Египта и Монгольской империей.

SUMMARY

The observance of mutuality of rights and obligations in the international treaties concluded by the Armenian Kingdom of Cilicia with the Mamluk Sultanate of Egypt and the Mongol Empire

In the Middle Ages the states concluding international treaties used to pursue their own interests without regard to the interests of other parties. Mostly the trade relations of countries were built on the basis of mutuality. The article deals with the issue of observance of mutuality in the international treaties concluded by the Armenian kingdom of Cilicia with the Mamluk Sultanate of Egypt and the Mongol Empire.